

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱԿՈՐԿԱԾ
ԿՈԼԵԳԻԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 313-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔԱՆԻՆԵՐՈՎ ԱՌԱՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱԿՈՐԿԱԾ ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2014 թվականի

թիվ 11/6

քաղ. Երևան

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 313-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔԱՆԻՆԵՐՈՎ ԱՌԱՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 313-րդ հոդվածին համապատասխան ՄՓԱ-ով առաքման համար
չթույլատրվող ապրանքներ պարունակող միջազգային փոստային առաքանիների հետ կապված Մաքսային
միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնություններ իրականացնելիս
ընդհանուր մոտեցումներ կիրառելու նպատակով՝ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային
ծառայությունների միավորված կոլեգիան **որոշեց՝**

Հաստատել Մաքսային միության մաքսային օրենսգրքի 313-րդ հոդվածին համապատասխան միջազգային
փոստային առաքանիներով առաքման համար չթույլատրվող ապրանքների նկատմամբ մաքսային
գործառնությունների իրականացման կարգի վերաբերյալ առաջարկությունները (կցվում են):

Նախագահի տեղակալ՝
Նախագահի տեղակալ՝
Ռուսաստանի ՂՄԾ-ի ղեկավարի առաջին տեղակալ,
Միավորված կոլեգիայի անդամ՝

Ա.Ֆ. Շախլևալի
Գ.Կ. Ամիրյան

Վ.Մ. Մալինին

Հավելված
Մաքսային միության անդամ պետությունների մաքսային
ծառայությունների միավորված կոլեգիայի թիվ 11/6 որոշման

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 313-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔԱՆԻՆԵՐՈՎ ԱՌԱՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն առաջարկությունները մշակվել են Մաքսային միության մաքսային օրենսգրքի 313-րդ հոդվածին
համապատասխան ՄՓԱ-ով առաքման համար չթույլատրվող (այսուհետ՝ ՄՓԱ-ով առաքման համար արգելված)
ապրանքներ պարունակող միջազգային փոստային առաքանիների (այսուհետ՝ ՄՓԱ) հետ կապված Մաքսային
միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնություններ իրականացնելիս
ընդհանուր մոտեցումներ կիրառելու նպատակով:

Մաքսային միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ ՄՄ ՄՕ) 4-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի
համաձայն՝ Մաքսային միության մաքսային տարածք ապրանքների ներմուծումը մաքսային սահմանն անցնելու
հետ կապված գործողությունների իրականացումն է, որոնց արդյունքում ապրանքները Մաքսային միության
մաքսային տարածք ժամանել են ցանկացած միջոցով՝ ներառյալ ՄՓԱ-ով առաքումը, խողովակաշարային
տրանսպորտի և էլեկտրահաղորդման գծերի օգտագործումը՝ մինչև մաքսային մարմինների կողմից դրանց
բացթողումը:

ՄՄ ՄՕ-ի 313-րդ հոդվածի համաձայն՝ ՄՓԱ-ով առաքում չի թույլատրվում այն ապրանքների դեպքում՝
– որոնց ներմուծումը Մաքսային միության տարածք կամ արտահանումն այդ տարածքից արգելված է:
– որոնց առաքումն արգելված է՝ Համաշխարհային փոստային միության ակտերի համաձայն:
– որոնց նկատմամբ կիրառվում են սահմանափակումներ, եթե այդպիսի ապրանքների առաքումը ՄՓԱ-ով
արգելվում է՝ Մաքսային միության հանձնաժողովի որոշմանը համապատասխան:

Այն ապրանքների տնօրինումը, որոնց՝ ՄՓԱ-ով առաքումն արգելված է և (կամ) սահմանափակ է,
իրականացվում է՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Ռուսաստանի Դաշնության Կառավարության, Բելառուսի Հանրապետության Կառավարության և Ղազախստանի Հանրապետության Կառավարության միջև «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի 2-րդ հավելվածի 4-րդ կետին և Մաքսային միության հանձնաժողովի «Միջազգային փոստային առաքանիներով ապրանքների առաքման առանձնահատկությունների մասին» 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 338 որոշմանը համապատասխան՝ ՄՓԱ-ով առաքման համար արգելված ապրանքների շարքին են դասվում, այդ թվում՝ ավիոհոլային արտադրանք, էթիլային սպիրտ, գարեջուր, ցանկացած տեսակի ծխախոտային արտադրատեսակներ և ծխելու համար նախատեսված խառնուրդներ, ցանկացած տեսակի զենք, դրանց փամփուշտները, դրանց մասերը, ինչպես նաև արտադրատեսակներ, որոնք կառուցվածքով նման են քաղաքացիական և ծառայողական զենքի, թմրամիջոցներ, հոգեմեդիկամենտ (հոգեմեդ) նյութեր և դրանց պրեկուրսորները:

ՄՄ ՍՕ-ի 152-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Մաքսային միության մաքսային տարածք ժամանած այն ապրանքները, որոնց ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք արգելված է, ենթակա են Մաքսային միության մաքսային տարածքից անհապաղ արտահանման, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ և (կամ) միջազգային պայմանագրերով: Ապրանքների դուրսբերման անհնարինության կամ դրանց անհապաղ դուրսբերում չիրականացնելու դեպքում այդ ապրանքները ենթակա են արգելապահման՝ ՄՄ ՍՕ-ի 21-րդ գլխին համապատասխան:

ՄՄ ՍՕ-ի 4-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների դուրսբերումն այնպիսի գործողությունների իրականացումն է, որոնք ուղղված են Մաքսային միության մաքսային տարածքից ցանկացած եղանակով ապրանքների դուրսբերմանը՝ ներառյալ ՄՓԱ-ով առաքումը:

Համաշխարհային փոստային կոնվենցիայի (Ժնև, 2008 թվական) 15-րդ հոդվածով սահմանված է, որ այն առարկաների ներդրվածքով առաքումները, որոնք թվարկված են 2.1.1 կետում (թմրամիջոցները և հոգեմեդիկամենտ (հոգեմեդ) նյութերը (ինչպես դրանք սահմանված են Թմրամիջոցների նկատմամբ հսկողության միջազգային կոմիտեի(ԹՆՀՄԿ) կողմից կամ այլ ապօրինի նյութեր, որոնք նշանակման երկրում արգելված են). 2.1.2 կետում (անպարկեշտ կամ անբարո բնույթի առարկաներ). 3.1 կետում (պայթուցիկ, բռնկվող նյութեր և այլ վտանգավոր բեռներ, ինչպես նաև ռադիոակտիվ նյութեր, որոնք արգելված են առաքման բոլոր կատեգորիաներում). 3.2 կետում (չլիցքավորած պայթուցիկ սարքեր և ռազմամթերք, այդ թվում՝ չլիցքավորած նռնակներ, արկեր և այլ նույնանման առարկաներ, ինչպես նաև նման սարքերի և առարկաների կաղապարվածքներ, որոնք արգելված են առաքման բոլոր կատեգորիաներում) ոչ մի դեպքում ենթակա չեն նշանակակետ առաքման, հասցեատիրոջը հանձնման, ուղարկման վայր վերադարձման:

Այդպիսով, ՄՓԱ-ով առաքման համար արգելված ապրանքները, ցանկացած եղանակով, այդ թվում՝ ՄՓԱ-ով առաքմամբ, ենթակա են դուրսբերման Մաքսային միության մաքսային տարածքից և ենթակա են վերադարձման ուղարկողին՝ բացառությամբ Համաշխարհային փոստային կոնվենցիայի 15-րդ հոդվածում նշված ապրանքներից, ինչպես նաև վարչական իրավախախտումների կամ հանցագործությունների առարկա հանդիսացող ապրանքներից, որոնք առգրավված են կամ դրանց վրա կալանք է դրված՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Նշված ապրանքների դուրսբերմանն ուղղված միջոցների ընդունումը վերապահվում է փոստային կապի օպերատորին՝ ՄՄ ՍՕ-ի 314 հոդվածի 6-րդ կետին համապատասխան: